Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-220-26.02.2013-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ կետով.

«10) տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 10.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«*Հոդված 10.1. Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը*

Սույն օրենքի իմաստով համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա: Համայնքում տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունի համապատասխան համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում: Համայնքի բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին որոշմամբ:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան մեկ տոկոսը՝ տասը հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքներում, երկու տոկոսը՝ հազարից մինչև տասը հազար բնակիչ ունեցող համայնքներում և չորս տոկոսը՝ մինչև հազար բնակիչ ունեցող համայնքներում: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը պարտադիր կարգով ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կրկին անգամ կարող է ներկայացվել և սույն հոդվածով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների կողմից ընտրված ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության 32-րդ կետից հետո լրացնել նոր 33-րդ և 34-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«33) քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

34) քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ:»:

Հոդված 5. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.

«3.1) կատարելու համայնքի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ.»:

Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1-ին և 3.2-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«3.1) ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին.

3.2) օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.»:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության 7-րդ կետի «քվեարկությունների» բառից հետո լրացնել «կամ մշտական հանձնաժողովի նիստերի» բառերով:

Հոդված 8. Օրենքի 23-րդ հոդվածում.

1) վերնագրի «հատուցումը» բառից հետո լրացնել «և գործունեության երաշխիքները» բառերով,

2) լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների ընդունելության, ինչպես նաև հանրային հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ է հատկացնում համայնքի ավագանու անդամին:»

Հոդված 9. Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետից հետո լրացնել նոր 6.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.

«6.1) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին որոշմամբ.»:

Հոդված 10. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին պարբերության 10-րդ կետից հետո լրացնել նոր 10.1-ին և 10.2-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«10.1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

10.2) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.»:

Հոդված 11. Օրենքը լրացնել նոր 33.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«*Հոդված 33.1. Համայնքի ղեկավարի գործունեությունը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում*

Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը, այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության).

2) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար.

3) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես՝ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին.

4) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:»

Հոդված 12. Օրենքը լրացնել նոր 54.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«*Հոդված 54.1. Համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը*

Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և/կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ, ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ):

Համայնքի ղեկավարը, մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը, կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց

լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:

Խորհրդակցական մարմնի գործունեության կարգը, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվության տրամադրման կարգը սահմանվում է համայնքի ավագանու կողմից:»:

Հոդված 13. Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Համայնքի ղեկավարը, մինչև համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը, կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:»:

Հոդված 14. Սույն օրենքի կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների ծախսերի ավելացումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:

Հոդված 15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Ռուբեն Հակոբյան	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի երկրորդ պարբերությունից հանել «, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգով» բառերը: Համաձայն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի Ուտրեխտում 2009 թվականին ընդունված լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 3-րդ կետի՝ տեղական իշխանության գործերին մասնակցության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը պետք է սահմանվեն օրենքով: Իսկ նույն հոդվածի 5.1-րդ կետի համաձայն՝ «Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի ցանկացած նորմ, պայման և սահմանափակում պետք է սահմանվի օրենքով...»:	Չի ընդունվել	Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը ավագանու կողմից հաստատելու վերաբերյալ դրույթը սահմանվում է ներկայացվող **Օրենքի** նախագծով, և պրակտիկայում բազմաթիվ են այն դեպքերը, որ, օրինակ, որևէ օրենքի պահանջով ՀՀ կառավարության կողմից հաստատվում են կարգեր, որտեղ սահմանվում են որոշակի իրավունքներ և պարտականություններ: Բացի այդ, այդ կարգն իրենից ներկայացնելու է բավականին ծավալուն փաստաթուղթ, և, այդ փաստաթղթի բովանդակությունը ներառելով օրենքում՝ չափազանց կծանրաբեռնենք այն, ինչը նպատակահարմար չէ:
ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ Ս. Մարգարյան և Ն. Փաշինյան	Առաջարկում եմ հոդված 3-ում սահմանված համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ համայնքի բնակչության ռեգիստրում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան չորս տոկոսի փոխարեն նույն հոդվածում սահմանել տոկոսների սանդղակ ըստ բնակչության թվի:	Ընդունվել է	Նախագծի 3-րդ հոդվածում սահմանվել է տոկոսների սանդղակ՝ ըստ բնակչության թվի
ՀՀ կառավարություն	1.Նախագծի 3-րդ և 13-րդ հոդվածներում «...1-ին մասից հետո լրացնել նոր մասով» բառերը առաջարկում ենք փոխարինել «1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն» բառերով, քանի որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հոդվածներում բացակայում է մասերի համարակալումը:	Ընդունվել է	Նախագծի 3-րդ և 13-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	2. Նախագծի 3-րդ հոդվածում «համայնքի բնակչության ռեգիստրում հաշվառված» բառերը փոխարինել «համայնքում հաշվառված» բառերով:	Ընդունվել է	Նախագծի 3-րդ հոդվածում «...համայնքի բնակչության ռեգիստրում հաշվառված...» բառերը փոխարինվել են «համայնքում հաշվառված» բառերով

	3.Նախագծի 4-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածներում «1-ին մասի» բառերն առաջարկում ենք փոխարինել «1-ին պարբերության», իսկ 6-րդ հոդվածում «2-րդ մասի» բառերը՝ «2-րդ պարբերության» բառերով:	Ընդունվել է	Նախագծի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	4.Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետում «նոր մաս» բառերը փոխարինել «նոր պարբերություն» բառերով:	Ընդունվել է	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետում «նոր մաս» բառերը փոխարինվել են «նոր պարբերություն» բառերով
	5.Նախագծի 12-րդ 13-րդ հոդվածներում հստակեցնել հղումները:	Ընդուվել է	Նախագծի 12-րդ և 13-րդ հոդվածներում հղումները հստակեցվել են:
	6) Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում հստակեցնել, թե վերնագրի որ բառերից հետո է կատարվում հիշյալ լրացումը:	Ընդունվել է	Նախագծի 8-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն